


Եղիշչառաց Ա.

Ժողովրդին հոգափռ-
ընել Եղիշչառ, Եղ Եղի՛՛
հոգովաճ ճաման և Եղ
յուղաց ստիճան զիզ: ՀՀ.




1999.7

ՖԵՕԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՒՐՈՊԱ-
ՅՈՒՄ, ՄԵՐ ԵՐԿՐԻ ՀԱՅԱԲՆԱԿ ՄԱՍՈՒՄ ԵՒ
ՄԵՐ ԳԻՒՂԱՑՈՒ ԱՅԺՄԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԴՐՈՒԹԻՒՆԸ



ՀՀՀ

(Արտաստպած «Մշակ» լուազրից):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԹԻՖԼԻՍ

Կովկասի կառավարչ, Գլխ. կառավ. տպարանում

1882



ՖԵՕԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՒՐՈՊԱ-
ՅՈՒՄ, ՄԵՐ ԵՐԿՐԻ ՀԱՅԱԲՆԱԿ ՄԱՍՈՒՄ ԵՒ
ՄԵՐ ԳԻՒՂԱՅՈՒ ԱՅԺՄԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՐՈՒԹԻՒՆԸ:

Մի համեստ նուէր տաճկական չա-
յաստանի երկու քաջ և հաւատարիո
հոգիւներին, — Եւրոէսպատրիարին և
Խրիմեան եղիսկոպոսին:

Das Alte stürzt, es ändert sich
die Zeit, und neues Leben blüht
aus den Ruinen (Ճինը քանդվում է,
ժամանակը փոխվում, և աւելակների
միջից նոր կեանք է ծաղկում) Schil-
ler (Wilhelm Tell):

I. Հողատիրութեան հարցի զրոխիմը: II. Գեօ-
գալական հողատիրութիւնը Արևմտեան Երօպա-
յում: III. Ռուսաստանում: IV. Մեր մուգերի
ծագումը և վերջը: V. Մուգերի իրաւարանական
բնութիւնը: VI Երկրի նշանակութիւնը զիւլա-
ցու համար և Գեօգալական հողատիրութեան հե-
տևանքը: VII. Մեր զիւլացու այժմեան անտեսա-
կան զրոխիւնը և նրան օգնելու միջոցները: VIII.
Հին Հայաստանի հողատիրութեան մասին լռելու
պատճեռը:

Дозв. ценз. Тифлисъ, 5-го Апрѣля 1882 г.

(Перепечатано изъ газеты «Мпакъ»).

4519-60

28. 520

I. Զէ կարելի լուել երբ «Մշակը» զբաղված է մեր տնտեսական ամենազլիսաւոր և ամենահետաքրիտ հարցերից մէկով: Խօսքս կալուածական խնդրի մասին է, որի այս կամ այն տեսակ վճռելուց կախված է մեր գիւղացու բոլոր տնտեսական կեանքը և բարօրութիւնը: Խօսել հարկաւոր է, բայց ինչպէս: Այնպէս ինչպէս անցեալ տարի արդին սկսեցին՝ Սեմեօնի գրքի բովանդակութիւնը դուրս գրել և կամ նկարագրել ուսւաց կալուածական հարցի վճռուը, — թէ հարկաւոր է ուրիշ տեսակ վերաբերմւել այս ծանրակշխութիւնն: Համեմատական մեթօջը մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ այդ կերպով շատ մուլթ հարցերի վրա կարելի է լոյս գցել: Բայց նկարագրելով ուսւաց կալուածական խնդրը առանց համեմատելու հայ գիւղացու տնտեսական կեանքին, կարծեմ չենք կարող շատ բան առաջ տանել: Մենք գեռ ծանօթ չենք, ինչպէս հարկն է, հայ գիւղացու տնտեսական կեանքին ու նրա կարիքներին. չենք որոշել մեր կալուածների շիրաւաբանական բնութիւնը. չենք բացատրել կալուածների պատմական ծագումը, և վերջապէս կալուածաերի ու գիւղացիների փոխազարձ յառաքերութիւնները, — ուզում ենք վայրիվերոյ փիւսովիայութիւն անել և այդպէս հեշտ վճռել այն տնտեսական հարցը (հողատիրապես ական ագրարնայի առողջութիւնը), որ Հին Յունաստանում,

Հուօմում, հին և նոր Եւրօպայում այնքան դժուարութիւնների և արինահեղ պատերազմների պատճառ դարձաւ:

«Մշակը», զննելով այս խնդրը, տալիս է կալուած բառին ընդարձակ նշանակութիւն: Կալուած նշանակում է ամենայն հողատիրապետութիւն (землевладение). այս ընդարձակ մաքով նա համանուն է ադրաբական հարցին (аграрный вопрос): Բայց կալուած բառը ունի ուրիշ նեղ, սահմանափակված նշանակութիւն (право на землю): Կալուած բառը իր նեղ մաքով ենք ընսրում մեր յօդուածին առարկայ:

Կալուածը կամ մուլքը մեր երկրի մէջ չունի այն նշանակութիւնը և իրաւաբան ական բըն ութիւնը, ինչ այժմնան Արևմտեան Եւրօպայում և Ռուսաստանում, թէ իր պատմութիւնով և ծագումով շատ նման է Եւրօպական կալուածին: Մեր երկրում կալուածատէրի իրաւունքը սահմանափակված է, թէ ուսւաց օրէնքի զօրութիւնով և թէ տեղական դիրքերով և կանոններով: Կալուածական գիւղերում, գիւղական համայնքը աւելի իրաւունք ունի հողի վրա, բան թէ կալուածատէրը. համայնքը բաժանում է հողը իր անդամների մէջ: Գիւղացին կարող է իր բաժինը մշակել, տալ ուրիշին մշակելու, մինչև անդամ մի-

բանի տարի ամսմշակ թողնել: Կարելի է ասել զիւղացին վարդում է իր բաժին հողի հետ ինչպէս ո ե փ ա կ ա ն ա տ է ր. Նրա միայն ծախելու իրաւունքն է ո ա հ մ ա ն ա փ ա կ վ ա ծ, կամ աւելի բաւ ասենք, արգելված: Եթէ նա այս կամ այն պատճառով պատասխանատու լինի, նա պատասխանատու է բոլոր համայնքի առաջ և ոչ թէ կալուածատէրի: Վերջինին ինչպէս ո ե փ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն պատկանառմ է մի կառոր հող Հաղ-չա տեղ՝ անունով:

(Աղջա տեղի քանակութիւնը կախված է աղջաների թոււից և մեծութիւնից: Եթէ օրինակ կալուածատէրի դիւղը բաղկանում է 5 աղջաից, նա ստանում է հինգ աղջատեղ. իսկ ամեն մի աղջատեղի մեծութիւն կարող է լինել 5—10 դեսիարին. և աւելի, դա կախված է աղջայի մեծութիւնից:)

Մնացած հողը պատկանում է համայնքին և մշակվում է նրանով. կալուածատէրը այդ հողի բերքից ստանում է $\frac{1}{6}$, $\frac{1}{7}$ — $\frac{1}{10}$ մասը: Իսկ եթէ հողի վրա ցանկում է ոչ թէ հացաբոյս (չլաք), այլ բուսան, պարտէզ, այդի կամ տեխնիկական բայսեր (техническія растенія), կալուածատէրը իր պատկանած տարբերը ստանում է դրամով, որի քանակութիւնը շատ զանազան է և կախված է տեղական կանոնից:

Վէդիբասարա մհալում, Երևանայ գաւառի, օ-

րինակ, մուլքադարը այդ դէպում ստանում է սօմարից 40 կոպ. կամ 1 ր. 20 կ. դէսիատինից, եթէ դէսիատինը երեք սօմարատեղ հաշւենք:

II. Բայց այս ինչպէս իրաւաբանական կարգ և կանոն է, որ կալուածատէրը հողատէր (չըլլեվլածնելով) է և մի և նոյն ժամանակ սեփականատէր չէ. ինչո՞ւ է նրա իրաւունքը այդպէս սահմանափակված: Այս հարցը վճռելու համար հարկաւոր ենք համարում դիմել պատմութեանը. նա մեղ շատ բան կը սովորեցնի և լոյս կը զցի այս հարցի վրա: Մ'ենք կամնում ենք համեմատել մեր կալուածական կարգը Եւրօպայի ֆեոդալական բնիւմի հետ և այս ճանապարհով որոշել մեր կալուածների-մուլքերի իրաւաբանական կազմուածքը և բնութիւնը:

Հարցը դժուար է և մշակված չէ. բայց փորձել հարկաւոր է, որովհետեւ շուտ թէ ուշ այս փորձը պէտք է անենք:

Յայտնի է թէ ամբողջ Եւրօպայում «Փեոդալական» և «լենական» սիստեմի տիրապետութեան ժամանակ սիւզերնը—երկրի գերիշխանը (թագավոր կամ իշխանը) յանձնում էր իր երկրի զանազան մասերը վասարամ են իրենց հողերը փաքր կալուածների վրա և յանձնում իրենցից ստոր-վասարներին—ասպետներին: Այսպիսով ամբողջ տէրութիւնը ծածկվում էր փաքր կալուածներով: (Ազատ

էր մնում, այն էլ ֆեօդալական բնժիշտ առաջին դարերում, միայն ժողովրդի ազատ դասը (Gemeinfrei):

Օրինակի համար Վիլհելմ Նուանողը Անգլիան նուանելուց յետոյ բաժանեց բոլոր երկիրը 60,000 ասպետական կալուածների վրա (քուարչեալ լանդ): Իրանը վեր առաջ, նա 1500 կալուած, կամ ամբողջ տէրութեան $\frac{1}{40}$ մասը, իսկ մնացածը ստացան Վիլհելմի վաստաները և սրանց ասպետները: Մի և նոյնը կամ սրան շատ նմանը պատահեց և ամբողջ արևմտեան Եւրօպայում:

Մեր նպատակից հեռի է մահրամամարար քրն-նել ու հետազոտել ամբողջ ֆեօդալական կարգը ու նրա տնտեսական, սօցիալական ու իրաւարա-նական նշանակութիւնը և ազգեցութիւնը: Մեր թոյլ ենք տալիս մեզ ընթերցողի ուչազդութիւնը դարձնել ֆեօդալական սիստեմի միայն մի կողմի վրա, որ կարող է լոյս զցել մեզ հետաքրքրող կալուածական հարցի վրա: Մեր համեստ աշխա-տանքի առարկան կը լինեն հետեւեալ երեք հար-ցերը. ա) Սիւզերենի—գերիշխանի ու նրա վաս-տաների յարաբերութիւնները; բ) Վասսալի կամ ասպետի և կալուածները մշակող երկրագործների փոխադարձ յարաբերութիւնները. և վերջապէս ս) Այս տեսակ հողատիրապետութեան իրաւարա-նական կազմուածքը և բնութիւնը:

ա) Գերիշխանը և վասսալը

ունէր իրաւունք և պարտականութիւն դատել և պաշտպանել իր վասսալներին, այսինքն վճռել նրանց մէկ մէկու մէջ ծագած վէճերը, պաշտպանել արդարին և պատմել մեղաւորին: Գերիշխանը պարտաւոր էր դառնալ հոգաբարձու վաս-սալների մահից յետոյ նրանց դերահաս որդուց վրա, ինչպէս հոգաբարձու պաշտպանել նրանց տնտեսական և իրաւաբան ական ինտե-րիւնները և մինչեւ անդամ պատկել վասսալի հա-սած աղաներին ու մարդու տալ աղջիկներին (jus maritagium):

Վասսալ կամ ասպետը ստանում էր իր գե-րիշխանից կալուածը, պարտաւորվելով զօրքով և փողով օգնել նրան պատերազմի ժամանակ. իսկ խաղաղութեան ժամանակ կատարել անձնական ծառայութիւններ, վճարել առողքեր և ստիպողա-կան պարզեներ անել: Գերիշխանը ունէր իրա-ւունք յետ առն ել կալուածը, եթէ վաս-սալը պար տաղանց ութիւն էր գործում,— համարակում էր տուրքերը վճարելուց, ապստամբ-վում էր նրա գէմ և կամ դաւանում էր նրան— իր տէրին:

Կալուածները վասսալների կամ ասպետների սեպ հական ութիւնը չէ ին, այլ նրանք իրենց անձնական ծառայութեան և արեան զնո-վը, ինչպէս վարձարարութիւն, ստանում էին կալուածի վրա միայն դատաստանական,

կառավարչական և օդուակարգելու—
օգուտ քաղելու իրաւունք (ususfructus): Այս
իրաւունքը առաջ անձնական բնութիւն ու-
նէր և կամաց կամաց դառնում էր ժառանգա-
կան: Ուստի կալուածատէրը դառնում էր «մի ջ-
նորդ» գերիշխանի և հողագործ ժողովով մէջ.
նա ժողովում էր այն տուրքերը և հարկերը, որ
զիւղացիները ինչպէս հպատակ պարտ էին վճա-
րել գերիշխանին, բայց այս տուրքերը մնում էին
կալուածատէրին, որովհետեւ այդ նրա ծառայու-
թեան վարձատրութիւն էր: Միայն շատ դարե-
րից և պատերազմներից յետոյ վասսալ-
ների և նրանց ասպետների հոգատի-
րութիւնը դառաւ նրանց սեպհական ու-
թիւնը:

Ե) Գիւղացիների և վասսալների ու
ասպետների յարաբերութիւնները: ա-
գիւղացիները (—այսաեղ մենք ի նկատի ունենք
ազատ հողատէրները (gemeinfrei) —) ֆեոդալական
առաջին դարերում կալուածատէրի ոչ ճորտերն
էին և ոչ ստրուկները, ուրեմն անձամբ բոլորո-
վին ազատ էին, և շատ խիստ թէ իրենց չինք-
ն ավարութեան իրաւունքով՝ և թէ
անտեսական դրութիւնովը զանազանիում էին ճոր-
տէրից և մանաւանդ ստրուկներից: Խակ վերջումը
նրանք ենթարկվելով կալուածատէր վաստակի դա-
տաստանական իրաւունքին և կորցնելով իրենց

չին տնտեսական անկախութիւնը, եր-
բեմն ակամայ, իսկ երեմն կամաւոր (շատ
զիւղացիներ իրենց ազատ հողը տալիս էին վան-
քերին ու վասսալներին, թողնելով իրանցը միայն
ժառանգական օգտակարկելու իրաւունքը) դառան
ճորտեր (երբութոյ, hörige Leute): Մի և նոյն
ժամանակը շատ ստրուկների իրաւունքները ըն-
դարձակվեցան. նրանք ու ացան մշակելու հո-
գեր, և դատան ճորտեր: Ստրուկը առաջ բոլոր
մարդկացին իրաւունքներից զուրկ մի էակ էր,
իսկ այժմ նա ուներ հող և ճորտ էր: Այսպէս
կազմակերպվեց ճորտերի դասը, որոնք իրենց
տնտեսական կեանքում բոլորովին կախված էին
կալուածատէրների կամքից: բ) Ֆեոդալական կարգի
առաջին դարերումը քաղաքական կեանքը դեռ
դարգացած չէր և փողական տնտեսու-
թիւնը (денежное хозяйство) համարեա յայտ-
նի չէր. ուստի բոլոր տուրքերը յօգուտ կալուա-
ծատէրի վճարվում էին բնութիւնով, այսինքն
երկրի բներքերով: Ինչպէս տուրքերի և հարկերի
այնպէս և անձնական ծառայութիւնների չափը,
քանակը և ճնշումը և ճնշումը որոշված և հա-
տատաված էր մեծաց գիրքով ու կանոնով (օբյա-
կու որածութեան ժողովագործում) և դրական իրա-
ւունքով: Վիւղացին ազատ էր կալուածատէրի
հաճոքից և կամակորութիւնից:

դ. Երբ Փետական ազնուականներին յաջող-
փեց իրենց վասալական կախումը գերիշխանից
խախտել և թուլացնել, երբ կալուածը ժառան-
գական տիրապետութիւնից դարձած ու եպ-
հական ու թիւն և վերջապէս երբ բոլոր
նախկին ազատ հողատերերը ճորտացան, տուրքե-
րի քանակութիւնը և ձեր նշան ա-
կում էր և որոշում էր կալուածատէ-
րը կամ նրանից նշանակված կառա-
վարիչը: Բացի որանից օրից օր տնտեսական
սպայմանները փոխվում էին, տուրքերը շատա-
նում և անձնական ծառայութիւնների ձեռքը
ստրոափելի բնութիւն ստանում: դ. Բնական
բան է, ճորտացած զիւղացիները ամեն տեսակ
աշխատում էին աղատվել իրենց ստուանելի դրու-
թիւնից. Նրանք փախչում էին ինքնավարութիւն
ստայող քաղաքները, մոռանում էին զիւղը
և այդպիսով կտրվում էր դիւզացու
կապը հողի հետ: Մի և նոյն ժամանակ
ստրուկներն էին կամաց կամաց աղատութիւն ստա-
նում: Այս երկու դասից, —հողից զրկված զիւղա-
ցիներից և աղատված ստրուկներից —կազմվեցաւ
օրավարձ (ուժեղակե) բանուղների (պրօւետա-
րիատ) դասը: ե. Խոկ այն զիւղացիների հողա-
բաժինը, որոնք անձարութիւնից մնալով հողի վրա,
ստանում էին տնտեսական ստրկութեան լուծը, այն-
քան էր փոքրացել, որ հազիւ հազ կարողանում

էին կերակրվել: Նրանց արօտատեղերը (ՎԵՐՈՒ)

կալուածատէրերը բոլորովին կտրել էին. այնպէս
որ, Անգլիայում օրինակ, գեռ ԽV դարում զիւղա-
ցի ճորտը դժուարանում էր մինչև անդամ մի կով
և քանի խողեր պահել: Մի և նոյնը մինք անձամբ
նկատեցինք անցեալ ամառ Լիֆլանդիայում: *)

*) Այս տարի ճանապարհորդելով Գօրպատից
մինչև Խղօրսկ, որտեղ թաղած է ուստաց Ռիւ-
րիկ իշխանի եղբայր Տրուփօրը, հարիւր վերստի
հեռաւորութեամբ զաշտերի վրա ոչ մի զիւլ չը
տեսայ: Գիւղացիների միայնակ խրճիթները ցըր-
ված են անպատեղ բլուղների վրա: Այս երեսովը
ինձ չը զարմացրեց. Հիւսիսում պտղատու հողի
կտրները փոքր են և ցրված են անտառների և
ճահճների մէջ: Այստեղ մեծ զիւղեր չէ կարելի
հիմնել, որովհետեւ սրանց համար հարկաւոր են
ընդարձակ զաշտեր: Այսպէս են բնակվում զիւ-
ղացիները բայր Շվեյցարում, Նօրմեգիայում և
Ֆինլանդիայում: Բայց այս չէ կարելի ասել Լիֆ-
լանդիայի մասին, որովհետեւ այստեղ երկիրը շատ
լաւ բարուքված և մշակած է. զաշտերի վրա մին-
չև անդամ ձուի մեծութիւնով էլ քարեր չէք տես-
նի, այնպէս զարգացած է զիւղատանեսութիւնը
զերմանացի կալուածատէրերի մօտ: Վերջը մի
զիւղացու խրճիթի մօտ տեսայ մի կով ու մի խող
(օրուկած էին) — (կապած) մի փոքր արօտատեղի
վրա: Խոկոյն միշեցի Անգլիայի միջին գարերի
զիւղացու դրութիւնը, Փետական բեժիմը նրա
ստրուկների հետեամբներով: Քէազ է ասած, ոչ մի
տեղ Ռուսաստանում զիւղացու համար այնքան
գժուար չէ հող ճեռք բերել, ինչպէս այստեղի
զերմանացւոց մօտ. զերմանացիների դու խային

Ը Ե օ դ ա լ ա կ ա ն հ ո ղ ա տ ի ր ու թ ե ա ն ի-
ր ա ւ ա ր ա ն ա կ ա ն ը ն ու թ ի ւ ն ը : ա) Ա ռ ա ջ ի
ե ր կ ու հ ա ր յ ե ր ի ց պ ա ր զ յ ա յ ա ն ի է , թ է ֆ ե օ ղ ա լ ա կ ա ն
կ ա լ ու ա ծ ի ս ե ք ա կ ա ն ա կ ա ն ի ր ա ւ ու ն ք ը
մ ն ու մ է ր գ ե ր ի շ խ ա ն ի ձ ե ռ ք ի ն . ա ս պ ի տ
կ ա լ ու ա ծ ա տ է ր ը դ ա ն ու մ է ր մ ի տ ե ս ա կ լ « մ ի ջ »

Ե ս ս կ ա ն ու թ ի ւ ն ը յ ա յ ա ն ի է . ս ր ա ն ք ա մ ե ն ս տ ա կ
դ ժ ու ա ր ա ց ն ու մ ե ն ա յ ս տ ե լ ի է ս տ ա ն ս ա ց ի ն ե ր ի ն է
լ ա տ ի շ ն ե ր ի ն հ ո ղ ձ ե ռ ք ը ե ր ի է : Ա յ ս տ ե լ գ ի ւ զ ա ց ի
ն ե ր ի ն ի ր ա ւ ու ն ք տ վ ա ծ է հ ո ղ ե ր գ ն ե լ ու կ ա լ ու ա
ծ ա տ է ր ե ր ը պ ա ր տ ա ւ ո ր ե ն ծ ա փ ե լ . բ ա յ յ գ ս ո ւ ս ա ց
կ ա ս ա վ ա ր ու թ ի ւ ն ը տ ա կ ա ս չ է ն շ ա ն ս ա կ ե լ , ո ր ո վ
կ ա ր ո ղ ա ն ս ա յ ի ն գ ի ւ զ ա ց ի ն ե ր ը ա ւ ե լ ի հ ե շ ա ն հ ո ղ գ ն ե լ .
գ ի ւ զ ա ց ի ն կ ա խ ս ա ծ է գ ե ր մ ա ն ս ա յ ի կ ա լ ու ա ծ ա տ է ր ի
կ ա մ ք ի ց : Հ ա ղ ե ր ի ն ա յ ն ս փ ի ս ի գ ի ն ե ն ն ն շ ա ն ս ա կ ու մ ,
գ ի ւ զ ա ց ո ւ ն ա ն ն ա ր ի ն է գ ն ե լ . ա յ ս պ ա տ ա մ
ո ո վ ս ր ա ն ք ս տ ի պ ի ս ա ծ է ն է ժ ա ն ս ի գ ն ե լ . ի ս կ
ա յ յ գ հ ո ղ ե ր ը ա ն ս պ ո ւ ղ ե ն և ց ր վ ա ծ ե ն ք ը լ ո ւ ր ն ե ր ի
վ ր ա : Հ ո ղ ի թ ա ն գ ո ւ թ ի ւ ն ս պ ա տ ա մ ո վ մ ի ա յ ն հ ա ր ս
տ ա ց ա ծ գ ի ւ զ ա ց ի ն ե ր ի ն է ն կ ա ր ո ղ ա ն ո ւ մ հ ո ղ ձ ե ռ ք
ը ե ր ե լ , ի ս կ բ ն ա կ ի շ ն ե ր ի մ ե ծ մ ա ս ը ս տ ի պ ի ս ա ծ
բ ա ն ս ո ր զ ա ն ս ա լ կ ա լ ու ա ծ ն ե ր ու մ ս տ ա ն ս լ ո վ օ ր է կ ա ն
25—40 կ օ պ : Ե թ է բ ա ն ս ո ր ը տ ա ր ո վ է վ ա ր ձ
վ ա ծ , ն ա ս տ ա ն ո ւ մ է մ ի շ ի ն թ ւ ո վ 25 կ օ պ է կ
օ ր է կ ա ն . բ ա յ ի ս ր ա ն ի ց ն ա ս ո ւ ն ի ձ ր ի բ ն ա կ ա ր ա ն ,
ո ր ս տ ա ն ո ւ մ է կ ա լ ու ա ծ ա տ է ր ի ց : Յ ե տ ո յ ն ա ս ի ր ա
ւ ո ւ ն ք ո ւ ն ի 36 պ ո ւ ղ հ ա շ ա ր ա (ր օ յ է) ա ռ ն ե լ է
մ ա ն գ ն ո վ ի ր ը ն ս տ ա ն ի ք ի հ ա մ ա ր , տ ա լ ո վ ա մ ե ն ս
պ ա ր ի ց 50 կ օ պ : Բ ա ն ս ո ր ը ս տ ա ն ո ւ մ է մ ի փ ո ր ր ի կ
կ ո ւ ր հ ո ղ , ի ր բ ա ն ջ ա ր ե ղ ի ւ ն ը ց ա ն ե լ ու հ ա մ ա ր :
Ա յ ս պ ի ս ի բ ա ն ս ո ր ն ե ր ի օ ր է կ ա ն փ ա ր ձ ը 30 կ օ պ . չ է
բ ա ր ձ ր ա ն ո ւ մ : Ո ւ ր ի չ բ ա ն է ա զ ա տ բ ա ն ս ո ր ն ե ր ի դ ր ո ւ

ն ո ր դ — ա կ ա կ ա լ ու գ ե ր ի շ խ ա ն ի կ ա մ ն ր ա վ ա ս
ս ա լ ի , թ է է ն ա ն ա լ (կ ա լ ու ա ծ ա տ է ր ը) ն շ ա ն ս կ ո ւ մ
է ր ի ր կ ա լ ո ւ թ ա ւ ա ն ձ ի ն կ ա լ ու ա վ ա ր ի չ : կ ա լ ու ա ծ
ա տ է ր ը դ ա տ ո ւ մ է ր , կ ա լ ու ա վ ա ր ո ւ մ է ր գ ի ւ զ ա ց ի ն ե ր ի ն ,
ո ր ո ն ք ա պ ր ո ւ մ է ի ն ն ա ր ա կ ա լ ու ա ծ ա տ է ր է մ ի ն շ է

թ ի ւ ն ը , ն ր ա ն ք ա պ ա ւ կ ա ն վ ի ւ ր ը և ա շ ա ն ս ը ս տ ա ն ո ւ մ
ե ն ո ր է կ ա մ ն մ ի ն շ է 60—70 կ օ պ . բ ա յ յ գ յ ե ն ա յ ա
տ ա ր վ ա յ չ ս ա ս մ ա ս ը ս տ ա ն ն ց պ ա ր ա պ մ ո ւ ն ր ի ե ն չ է
ն ո ւ մ : Ա ն ա յ ս պ ա տ ա մ ո ւ վ է գ ի ւ զ ա ց ի ն վ ի ւ զ ա
գ ա ս ո ւ մ տ ա ր ո վ վ ա ր ձ վ ի ւ ր ը : Մ ե ն ք ն օ թ չ ս ա ր ա մ ի մ ր
ն ա ց ի ն ք գ ի ւ զ ա ց ի մ ա ն ձ ա մ ի ր դ ի ս ե յ ի ն ի ս կ ա մ ի ր
մ ա ր ա ր ե ր ու թ ի ւ ն ն ը ո ւ գ ի ւ զ ա ց ի ն ե ր ո ւ թ ի ւ ն ը ո ւ գ ի ւ զ ա ց ի ն
գ ի ւ զ ա ց ի ն ի ս ո ր ա մ ա ն կ ա մ ի ր է ն ա ր ե ն ս ի ն ե ր ո ւ թ ի ւ ն ը ո ւ գ ի ւ զ ա ց ի ն
ա ն շ ե լ ու մ ս տ ա մ ո ւ թ ի ւ ն ը , ի ն չ պ է ս ն ր ա ն ք կ ո ւ լ
ե ն ս տ ա վ ի ս ս լ ա ս ո ւ ն ս ա կ ա ն ց ե ղ ե ր ը : Գ ե ր մ ա
ն ա ց ի ն ի ս ո ր ա մ ա ն կ ա մ ի ր է ն ա ր դ ի ւ զ ա ց ի ն մ ի ե ր
կ ի ր , ս կ ս ո ւ մ է կ ա մ ա յ կ ա մ ա յ կ ա մ ա ն ս ա ր ե լ ե ր
կ ի ր ը և ի ր հ ա ր ե ն ս ի ն : Ն ա ձ ե ր հ ա յ ը ո ւ տ ո ւ մ է ,
ա շ ք ը ց ո ւ մ ի ր Գ ե ր մ ա ն ի պ ի ս ի վ ր ա . ք ա ն ի ն ա թ ո ւ լ
է , հ ա ր ե ն ս ի ն հ ա ւ ա տ ա ց ն ո ւ մ է թ է պ ա տ ր ա ս տ է
ն ր ա ն ե տ յ ո ւ ն ս մ ա ր գ կ ո ւ թ ե ա ն և ք ա զ ա ք ա կ ր
թ ո ւ թ ե ա ն ի լ լ ա յ ա ն ա լ : Հ ե ն ց ո ր ո ւ ր տ ե ղ ու մ է ի լ ս կ ս ի հ ա ր ե ն ս ի ն
շ ն շ ե լ ու մ ի ս ե ղ ե ր է ա ն ո ղ ո ր մ ա լ ա ր , մ ի ն շ է ո ր բ ո ր
ր ո ւ մ ի ն չ ն չ ի ե ր կ ր ի ե ր ե ս ի ց : Ե թ է գ ե ր մ ա ն ս ա ց ի ն
գ ա ղ մ ի դ ժ ո ւ կ ը , ն ա ս ի ս ո յ ն կ ր ս ո կ ս ի , ք ա ն ի ի

Պավուս Եր բոլոր շտուրք ու տալիքները,
դատաստանական տուրքները և այլն:

Նա ստանում էր բերքերից նշանակեալ մասը
թէն իր օգտին, բայց գերիշխանի անունով, նրա
համաձայնութենով և թոյլատութենով։ Ուրեմն այս
տեսակ հողատիրութիւնը յիշեցնում է այն իրա-
ւաբանական տիրապետութիւնը, որ հռօմայեցի-
ների իրաւաբանները անուանում էին «տ իր ու-
թիւն կամ տ իր ապետութիւն ուրիշ»

բեն թոյլ է զգում, սատանաների հետ եղայրութիւն անել, բայց հինգ որ զօրացաւ կը հեծնի սատանաների շնչին և նրանց արսորելով կասի. «Macht euch aus dem Staube, denn auch die Hölle ist «unser deutsches Vaterland!» — «Կորեք յաստեղից, որովհետեւ դժոխին էլ մեր — գերմանացիների հայրենիքն է»: Եւ աս ասրավակելի եսականութիւնը և մարտակերութիւնը մինչև անգամ գերմանացիների զիտականաներն էլ են անուանում «գերմանացիների ընդունակութիւն» քաղաքակրթութիւնը առաջ տանելու և պիտութիւն (Staat) հիմնելու»:
Այս նկատողութիւնը մնաք նրա համար ենք անում, որ «Մշակում» կարդացինք՝ գերմանացիները զիտակութիւն ունեն գաղթականներ ուղարկել տաճկաց Հայաստանը: Զգոյշ մնացէք, որ մի օր Հայաստանն էլ չանուաննի «գերմանացիների հայրենիք»: Եթէ նրանց ուր տեղ ըսնեց մեր երկրի վրա, այն ժամանակը կարող ենք ասել մնաս բարեւա Հայաստան: Յիրաւի գերմանացիները քաղաքակրթված ազգ են, նրանցից շատ բան կարող ենք սովորել, բայց այդ մեզ շատ թանգ կը նստի....:

անունով» (possessio, dententio alieno nomine). այդ ուրիշը ոչ այլ ոք էր, եթէ ոչ ինքը երկրի գերիշխանը (թագավորը կամ իշխանը): Զը կածեմ՝ մենք մեղանչենք ճշմարտոթեան դէմ, եթէ հռօմէական այս լրաւաբանական տերմինը փոխենք այսպէս «possesio nomine imperatoris, regis, principis» այսինքն «տիրապետութիւն, կայսեր, թագաւորի, կամ իշխանի անունով» ը) Այս տեսակ հոգածիրութիւնը ինքն ըստ ինքեան ունի հասարակական բնույթի առաջնային (պատմական) հատկությունը որ սեաձականամեր մնում էր ինքը երկրի իշխանը—տէրը. իսկ ինչ վերաբերում է նրա լրաւունքներին, սրանք կրում էին լրենց մէջ հասարակական բնութիւն, թէն հասարակականութիւնը (պատմական) այն ժամանակի ուրիշ միտք և նշանակութիւն ունէր քան թէ այժմ:

զ) Հողատիրապետութեան կէտից գերիշխանի և նրա վասսալների ու առաջետների վէճի և պատերազմի բովանդակութիւնը—էռթիւնը. կայանում էր նրանում, որ առաջինը պաշտպանում էր, աշխատում էր վերականգնութեան հարիչը և իր կերպի շխանական իրավունքը պահպանում էր իր կառավագական իրավունքը վրա. իսկ վերջինները ձգուում էին ազատվել վասսալական կախումից, — անձնական հոգածութեան վերաբերյալ առաջինը պահպանում էր իր կառավագական իրավունքը վրա.

բեալ անկախ և անսահման սեպհանք ականութիւնն: դ) Շատ տեղեր գերիշխանը յաղթով հանդիսացաւ, իսկ շատ տեղ վասահներ իրենց ասպետներով. բայց վերջ ի վերջոյ, դարմոր վեճերից և արիւնահեղ պատերազմներից յետոյ ֆեոդալական ազնուականութիւնը հասաւ իր նպատակին,—այն է ամբած հոգեթը դարձրեց սեպհանք և ականութիւնն: Ահա այս վեճի և պատերազմի վերջնական խօսքը. «Cascuns barons est souverains en sa baronnie»—ամեն բարօն գերիշխան է իր բարօնական կալուածութում (Beaumanoir XXXVI. 41):

Ահա մի փոքր բէզիւմք բոլոր ֆեոդալական հողատիրութեան մասին Արևմտեան Եւրօպայում:

III. Յթէ այժմ ակնարկենք Եւրօպայի արքելեան մասը, մենք կը զանենք ֆեոդալական հողատիրութիւնը այսուղ ես. խօսքու Ռուսաստանի մասին է: Ի հարկէ մեծ զանազանութիւն կայ ռուսաց ֆեոդալիզմի և Եւրօպական ֆեոդալական կարգերի մէջ. բայց հողատիրապետական յարաբերութիւնները միմեանց շատ նման են: Ռուսաստանումն էլ երբեմն դիւզական համայնքը բոլորու վին և սրառութիւնից տղատ էր. այսակեղ էլ իշխանները և առաջին թագաւորները (մինչև անգամ մինչև XVII դարի վերջը) ծառայուղ ազնուականութեանը ոռնիլի փոխարէն տալիս էին կալուածներ. այս իրաւաբանական կարգը

յայտնի է ռուսաց պատմութեան մէջ «система кормлениј» անունով, այսինքն «կերակրելու կարգ»: Գիւղական կալուածները (Յուգիա) ծառայում էին ազնուականների համար որպէս կերակրվելու աղբիւր: Այսուեղ էլ առաջին ժամանակը կալուածները ունիին անձնական բնութիւն և կամաց կամաց գառան ժառանդական տիրապետութիւն և յետոյ սեփականութիւն:

Ուռասաստանում գիւղական համայնքը սպաս և անկախ էր թէ իր տնտեսական զրութիւնով և թէ ինքնավարութեան իրաւունքներով: Խնչակը ռուսաց ծառայուղ ազնուականները կարող էին մեկ իշխանից միւսի մօտ փոխվել, նմանապէս էլ գիւղացին ի ընէ անտեւունէր իրաւունք թողնել կալուածը և նրա աիրոջ, եթէ ոս խիստ էր վարչում նրա հետ, և ծանր տուրքեր էր պահանջում կալուածը մշակելու համար: Այս է պատճառը, որ ռուս գիւղացին մինչև XVI դարը անհամեմատաբար աղատ էր քան թէ նրա ժամանակակից եղբայրները Արևմտեան Եւրօպայում: Ադամ թափառական կեանքը թէն վեստմար էր գիւղացուն և կալուածատէրին տնտեսական կէտից, բայց իրաւաբանական կէտից նու աղատ էր կալուածատէրի հաճուքից և կամակորութիւնից: Միայն 1596 թ., երբ Յօրիս Գարդանով «կապեց գիւղացիներին» հողից (որոքքութիւն) արգելով նրանց մէկ կալուածից միւսը փոխվել, — նա

սկսեց օրից օր կորցնել իր հին անտեսական անկախութիւնը, իր հին իրաւունքները և ստրկանալ (խօսք միայն կալուածական զիւղայիների մասին է և ոչ արքունական):

Եթէ մի քանիսը ռուսներից պնդում են՝ թէ ռուս ազգին ի բնէ անտի խորթ է կալուածական սեփական ու ռութիւնը.... նրանք չեն սիսալվում. հին Ռուսաստանում ինչպէս և արևմտեան Եւրօպայում ֆեոդալական կարգի առաջն դարերում, կալուածքը սեփականութիւն չէր: Գիւղացիները դառան ճորտ և ստրուկ XVII դարի ընթացքում և XVIII դարի առաջին քառորդում: Այս ժամանակը ռուսաց զիւղայիների դրութիւնը անտանելի էր. երբ նրանք XVIII դարում բոլորովին ստրկացան, նրանք էլ կորցրին իրենց կապը հողի հետ, որովհետեւ կալուածատէրը կարող էր նրանց կենդանիների և անսունների նման առանց հողի ծախել:

IV. Նոր համեմատական ազգագիտութիւնը ապացուցանում է՝ թէ ֆեոդալական կարգը և հոգատիրութիւնը յատկանիշ է ոչ թէ միայն եւրօպացիներին, այլ և համարեա բոլոր Ասիականն և Ամերիկական (Պերու և Մեկսիկայի) ազգերին: Ի հարկէ ամեն երկիր տալիս է ֆեոդալիզմն իր առանձնայատկութիւնը, բայց էութիւնը և բովանդակութիւնը—մանաւանդ հոգատիրապետական յարաքերութիւնների—մնում է մի և նոյնը: Բնիներցովի

ուշադրութիւնը դարձնում ենք Պարսկաստանի վրա. մնոք մասսամբ սրան ենք պարտական մեր կալուածների գոյութիւնով:

Պարսկաստանում (*), եթէ չենք սխալվում, ֆեոդալական յարաքերութիւնները մինչև այսօր էլ շարունակում են իրենց գոյութիւնը. զանազան մնձ գաւառների խաները (օրինակի համար Մակուա երկրի) ոչ այլ ոք են, եթէ ոչ շահի վասսարները: Ինչպէս ֆեոդալական վասսարներ, խաները ևս ստանում են երկրի վրա դատաստանական և կառավարչական իրաւունք, պարտաւորվելով օդնել շահին զօքքերով և փողով նրա թշնամիների գէմ: Զանազան կալուածներ, գիւղեր և մինչև անդամ գաւառներ յանձնում էր խանը իր անթիւ սպաշտօնեաներին և ծառաներին. սրանք կառավարում էին ստացած զիւղը կամ զաւար, ժողովում էին հարկերը ու տուքերը յօգուտ խանի զանձնին: Ինչպէս և հին Եւրօպայում, այստեղ էլ տուքերը վճարվում էին երկրի բնական բերքերով: Տուքերի չափը և քանակութիւնը որոշած էր տեղական աղաթներով, օրինակ Երևանայ նահանգում ժողովում էին խանի օդտին բեղքերի 1/6, 1/7, 1/10 մասը: Խանի պաշտօնեաները և ծառաները անսունգում էին «մուլք ադար» (մուլք

*) Այս տեղեկութիւնները մեզ հաղորդել են ծեր մարդկա:

տալող, ժողովող) իսկ ինքը հողատիրութիւնը և
կաշուածը «մուլք»։ Մուլքադարին պատկանում
էր մի կոոր հող, որ անուանվում էր «աղչա-թօր-
փաղի»—աղչատեղ։ Մուլքադարական իրաւունքը
չնորհում էր խանը ժամանակով, մինչև ցմահ, վեր-
ջին ժամանակը մուլքադարութիւնը ստանում էր
ժառանգական բնութիւն։

Մեր երկրի ֆեոդալական հողատիրութիւնը չը
հասաւ այն զարգացմանը և չունեցաւ այն հետե-
ւանիքները ինչ Եւրոպայում. նա մեռաւ, բայց ոչ
թէ բնական, այլ արուեստական և տարաժամ մա-
հով։ Հողատիրութիւնը այս դրոթեան մէջ էր,
երբ Ռուսաստանը նուաճեց մեր երկիրը։ Ռուսաց
կառավարչութեան առաջին ներկայացուցիչները
մեր երկրում արին մի և նոյն սխալը, ինչ անդ-
իւացիները Հնդկաստանում, Փրանսիացիները Ալժի-
րում, և առհասարակ եւրոպացիները իրենց կօջ-
նիաներում։ Եւրոպացիները չեն ուսումնափում
նուաճած երկրի տնտեսական և իրաւաբանական
կեանքը, չեն աշխատում ծանօթանալ տեղական
բնակիչների իրաւաբանական համոզունքների և
հայեացքների հետ, որպէս զի նրանց կարգադրու-
թիւնները և կառավարութիւնը համապատասխա-
նեն սրանց կեանքին և կարիքներին,—այլ ոյժի գո-
րութիւնով մոցնում են նուաճած երկիրը իրենց
խորթ օրէնքները։ Այստեղից ծագում է անբառ-
կանութիւն նուաճածների և նուաճողների մէջ, —

օրէնքի, տեղական իրաւաբանական կեանքի և
տնտեսական պայմանների մէջ։ Եւրոպացին կար-
ծում է՝ թէ բարբարոս ասխացիք ոչինչ կարգին
օրէնքներ չունեն։ Բայց այս սխալ քաղաքականու-
թիւնն հետեւանկները, յետոյ են երեսում։

Ինչպէս անպիյացիները Հնդկաստանի ջամին-
գարն եր ին (հող բաժանող պաշտօնեաներին) ըն-
դունեցին սխալմամբ կալուածաւէրերի տեղ—այն
մաքով ինչպէս եւրոպացիներն են հասկանում
կալուած բառը—և նրանց վրա հաստատեցին,
իբրև սեփական ութիւն, զիւգական հա-
մաշներին պատկանած հոգերը,—այնպէս և
ռուսաց կառավարութիւնը սխալմամբ հաստատեց
նախկին մուլքադարների վրա նրանց չը պատ-
կանող, նրանց կառավարութեանը յանձնած զիւ-
գերը։ Շատերը մուլքադարներից ձախուցին իրենց
մէքերը և զագթեցին Պարսկաստան։ շատերը շա-
րունակում էին ափառեառութիւնը առաջայ կար-
գերի հիման վրա։ Այսպէս զիւգական աղասի հո-
գաստիրութիւնը գագաւած կալուածական։ Դիւզացի-
ների իրաւունքները սահմանափակվեցան, իսկ
կալուածատէրները լայնացան և ստացան իրաւ-
աբանական ամրութիւն։ նախկին կառավար ի չը
կամ ժամանակաւոր հողի տիրողը
գար ձաւ լիակատար սեփականատէր,
բայց հողի որոշած մասսի վրա։

Յիրաւի կառավարութիւնը սահմանափակեց

մուլքադարների իրաւունքը, զրկելով նրանց կառավարչական (административный) իրաւունքի մեջորդուներից. քայլ առ քայլ հետեւելով առևաց դիւզացու դրսթիւնը թեթևացնելու և կամաց կամաց բոլորովին ազատելու քաղաքականութեանը, կառավարութիւնը չը մոռացաւ և մեր գիւղացուն. բայց սխալմունքը արած էր և դանվում էր նախկին կարգադրութեան մէջ:

Վ. Ահա մեր մուլքերի կարձառօս պատմութիւնը. մենք ծանօթ ենք նրանց ծագման հետ. մնում է բացատրել և որոշել նրանց իրաւաբանական կազմուած ծքը, բովանդակութիւնը և բնութիւնը: Կարելի՞ է արդեօք մուլքերը անուանել սեփականութիւն, թէ ոչ: Գոնէ մեր կարծիքով նրանք սեփականութիւն են, որովհետեւ նրանք ձեռք են բերված այն ճանապարհով, ինչպէս ուրիշ շատ սեփականութիւններ: Մեր մուլքադարները բնչ մեղաւոր են, որ պարսից կառավարիչ մուլքադարները սեփականատէր չեն. մուլքերը գնված են 50 և աւելի տարի սրանից առաջ: Ինչպէս ոռուաց օրէնքը, այնպէս և վաղեմական-հնական տիրութիւնը (давностное владение) տոել է նրանց սեփականութեան բնութիւն:

Բայց մեր մուլքերը ունեն իրենց առանձն աշատ կութիւնը, որի վրա մինչեւ այսօր, եթէ չենք սխալվում, ոչ ոք ուշադրութիւն չէ դարձրել: Վերելը

յիշեցինք՝ թէ կալուածատէրը ստանում է լմական բերքերի մի նշանակած մասը, իսկ հոգը իր ամբողջութեամբ մնում է գիւղական համայնքի տիրութեան և իրաւունքի տակին: Մեր կալուածատէրը ոչ այլ ոք է, եթէ ոչ պարսից մուլքադարի ժառանգորդը successor միայն այն զանազանութիւնով, որը նա հասարակ, ժամանակաւոր տիրապետական էր, իսկ սա (կալուածատէրը) սեփականատէր է: Իրաւունական կազմուածքը փոխվել է, բայց փոխվածթիւնը վերաբերում է իրաւաւունքի յատկութեանը (qualitas juris) և ոչ թէ չափին-քանակութեանը (quantitas juris): Այս վերջինը մնում է մի և նոյնը ինչ պարսից ժամանակին, թէև վերջին տարիներում մուլքադարները աշխատում են իրենց իրաւունքի քանակութիւնը, հիմնվելով ուստաց օրէնքների վրա, ընդառակելու և լայնացնել: Զը նայելով կալուածատէրերի այս ձգտմանը, մեր մուլքերը տեղական հին սովորութեանց և կանոնների զօրութեամբ մնում են մի և նոյնը ինչ Պարսկաստանի տիրապետութեան ժամանակը և խիստ զանազանվում են ուստաց և եւրոպացիների կալուածներից: Եւրոպայում կալուածատէրի իրաւունքը տարածվում է զիւղի կամ կալուածքի ամբողջութեան վրա, մինչդեռ մնանում միայն հոգի որոշեալ մասի վրա, որի չափը կախված է ստացած և կամուտափ քանակութիւնից (1/6,

1/7, 1/10): Ուրեմն եթէ մի որ և իցէ գիւղական համայնք կամնայ հողը կալուածատէրից գնել, նա պէտք է վճարի ոչ թէ հողի բոլոր ամբողջութեան գինը, այլ միայն մի մասի:

Այս մի քանի խօսքից երեսում է, որ մեր մուլքադարներին կարելի է անուանել սեփականատէր. բայց նրանց սեփականութիւնը սաստիկ ո ա հ ման ա փ ա կ վ ա ծ է: Պէտք է խոստովանվեմ, որ ես շատ զարմացայ, երբ ալ, Բահաթրեանցի յօդուածում կարդացի, իր թէ կալուածատէրը «օգուաքաղերով գիւղացու հողի կարօտութիւնից տալիս է հողը վարելու ամենածանր պայմաններով...» շատ աեղերում զիւղացին վարում է հողը կիսով, այսինքն սեփական ծախսով նա վարում է հողը և աշխատանքի կէսը տալիս հողատէրին» (տես Մշակի № 223, 1881թ.): Մեղ թոյլ ենք տալիս հարցնել պարո՞ն Բահաթրեանցից՝ նա չէ սիսալվում արդեօք և որտեղ է պատահում այդ: Գուցէ յարգելի պարո՞նը խառնում է կալուածատէրի հող բաժանելու իրաւունքը այն երեսյթի հետ, որ գիւղացիները տալիս են մէկ մէկի իրենց հողը կիսով—կիսրար կամ «հարակաշով» ինչպէս ուսմէօթին են ասում: Յիրաւի շատ անդամ պատահում է, որ զիւղացին ոչ թէ իր բաժին արքունական հողը, այլ և կալուածականը տալիս է այս պայմանաւ, բայց դա մուլքադարական իրաւունքի հետ ոչինչ կատ չունի:

VI. Երկիրը մարդկութեան մայրն է. հոգից մարդը ստանում է իր սկիզբը, իր օրէկան մնունով ամբողջ կեանքի ընթացքում և նրան յանձնում իր մարմինը մահից յետոյ: Այս պատճառով ամեն ազգ սիրում է իր երկիրը սրդիւկան սուրբ սիրով. հայրենեաց սէրը դառնում է մարդի համար մի տեսակ «կուլտ»—հաւատ: Ամեն ազգի մօտ յանուն հայրենեաց զոհում են իրենց կեանքը ամենասպանի և մեծ մարդիկ, դառնալով այս կերպ՝ սուրբ ապագայ սէրունդի համար: Հայրենիքը ազգի համար այն է, ինչ չուրը ձկան և օդը ամեն կենդանի օրդանիգմի համար. կարեցէք մի ազգի կապը իր հայրենի հողի հետ և նա կը մեռնի,—առաջ կը կորցնի իր քաղաքական անկախութիւնը, իսկ յետոյ կամաց կամաց կանհետանայ երկրի երեսից: Ամեն ազգի պատմութեան մէջ հողատիրութեան հարցը ամենածանրակշիռ հարցն է. Կրանչից են կախված ամբողջ դասերի քաղաքական իրաւունքները և տնտեսական կեանքը. այս պատճառով ազգութեանը պատկանող զանազան դասերը մրցում են և մինչև անգամ պատերազմում են իրար հետ հողատիրութեան համար: Բայց ոչ մի դաս այնքան հաւատարիմ չէ երկրին և կարօտ հողը զիւղացու տնտեսական բարօրութեան աղքարն է, ինքնափառութեան և մարդկացին անհրաժեշտ՝ իրաւունքների հիմքը: Քանի զիւղացու կապը հողի

հետ ամուր և զօրեղ է, նա կարող է ասել. «Ես և մարդ եմ և ունիմ մարդկային իրաւունքներ»: Կտրմցէք այդ կապը՝ նա կը դառնայ ստրուկ-ձորտ. նա կը փախչի քաղաքները և կը կազմի օրէկան բանուղների այն դասը, որ եւրօպացիների մօտ յայտնի է պրօլետարիատ անունով: Այսպէս պատահեց արևմտեան Եւրօպայում:

Բայց գիւղացին առանց ընդլիմազդութեան չէ կտրում կապը իր սիրած երկրից. նա հեշտութիւնով չէ թողնում այն հողը, որ բացի նրան օրէկան հաց տալուց, ամփոփում է իր ծոցում նորա նախնեաց նշխարը: Ծեր և երիտասարդ վեր են առնում գիւղական կոսիտ գէնքեր—բան, թիւկ, փայտ,—զնում են պատերազմի դաշտը իրենց օջախը և տունը պաշտպանելու. միայն յաղթվելուց և իր արիւնով իր հողը ներկելուց յետոյ գիւղացին հնապանսզվում է բազզաւոր յաղթողի կամքին—կամ թողնում է իր հողը...: Ոչ թէ հին աշխարհը—Հնդկաստան, Յունաստան և Հունի, այլ և միջին դարերի և նոր Եւրօպայի պատմութիւնը աղատ չեն հողատիրութեան հարցից և երկրագործ դասի շարժումից, և ապստամբութիւններից: Ի՞նչու էին ֆրանսիացիների ժակերիները ապստամբում (1358 թ.) և խորտակում իրենց աշերի-սենեօրների ամրոցները, Ի՞նչու անգիացի երկրագործ դասը Վադ-Տայլորի առաջնորդութեամբ (1381 թ.) է պաշարում Լօնդոն,

տիրապետում և պահանջում թագաւորից վերականգնացնել իր հին հողատիրական իրաւունքները: Ի՞նչու էին Հարաւային Գերմանիայի գիւղացիները (1525 թ.) աւերում իրենց տէրերի բուրջները:

Այս բոլոր ապստամբութիւնների պատճառը այն էր, որ ֆիոդալական հողատէրերի և գիւղացիների նահապետ ական յարաբերութիւնները քանդվել էին. կալուածը դառնալով հողատէրի սեփականութիւնը, կտրեց գիւղացիների աղատ կապը հողի հողի, հետ, աւերեց նրանց անտեսական բարօրութիւնը, ոչնչացրեց նրանց հին ինքնավարական իրաւունքները, ենթարկելով գիւղացւն ֆիոդալական հողատէրի իրաւասութեանը: Բացի ճորտութիւնից և անտեսական սարկութիւնից, գիւղացու ընտանեկան պատիւը մինչի անդամ աղատ չէր ֆիոդալական սենեօրի հաճոյքից. ումը չէ սարսափեցնում զրծոփացին «Jus primae noctis» (առաջի գիշերպայ իրաւունքը), որի զօրութեամբ գիւղացի նորապակ հարսը իսկոյն պասիլց յետոյ պիտի իր կուսութիւնը զոհ բերեր սենեօրի հեշտասէր հաճոյքին:

Վերջապէս ինչու XVII և XVIII դարերում ուռւսաց գիւղացին Ստենլա Բաղինի, Պուգաչօվի և միւս ապստամբուների հետ ձեռքը սուր էր առնում և ապստամբում: Պատճառը կրկին անտե-

սական էր. ով էր կազմում Պուգաչօվի և բաղինի գործի մեծ մասը, եթէ ոչ հողից փախած և արշաւանքին իրենց նույիրած գիւղացիները::: Գիւղացին ամեն տէրութեան ամուր հիմքն է, նաև է հայրենեաց զլիսաւոր պաշտպանը և նաև արժան է յարդանքի և թագաւորների հայրական հոգատարութեանը: Ահա ինչ պատճառով Ալեքսանդր Երկրորդը այնքան մեծ ուշադրութիւն դարձրեց ուսու գիւղացու գրութեան վրա և նոր թագաւոր կայսրը շարունակում է իր Հօր անմահ գործը:

Ահա ֆեօվալական հողատիրութեան կարծառութ պատմութիւնը: Հողատիրութիւնը մեծ դեր է խաղացել և խաղում է մարդկութեան պատմութեան մէջ: Շատ Սօլոններ և Լիկուրգներ աշխատել են վճռել այս հարցը. շատ Գրակինների գլուխը ենթարկվել է այս հարցի պատճառով վտանգի: Ա-մեն դար, ամեն սերունդ վճռելով այս հարցը այս կամ այն կերպով բացականչել է Արքիմենի սկս «էվրիկա» և կարծել է թէ կտրեց Գօրդեան կապը: Բայց վանապան դասերի մրցութիւնը հողի մասին շարունակվում է մինչև այսօր էլ. ձեզ փոփոխում է, բայց հարցի էռութիւնը մնում է մի և նոյնը:

Մեր ներկայ քաղաքական և սօցիալական դրութիւնը անյայտ էր անցեալ դարերի համար. մեզ համար մարդկութեան պատճայ պատմութեան ընթացքը մինչև այսօր էլ մնում է մութ և մը-

ա-այլ ինչպէս երկինքը փոթորկի կից առաջ, կամ կեանքը կոտրած սրտի համար: Մարդկութեան կեանքը ովկիանոս է. ալիքը բարձրանում է ալիքին կուլ տալիս. ալիքները փոփոխվում են, որովհետև նրանք կախված են քամու և փոթորկի գորութիւնից, իսկ օվկիանոսը իր ալիքներով մնում է յափառեան: Գանի որ հողը մարդկութեան քաղաքական և սօցիալական կեանքի մէջ «կերակրիչ մօր» տեղ է բըռնում, հոգատիրապետական վէճը զանազան դասերի մէջ կը շարունակվի: Խմաստուն օրէնստուն և քաղաքագէտը կարող է ժամանակ առժամանակ այդ վէճի հեղեղի առաջ կտրել. բայց ինչպէս կտրած գետը «գէօլ է տալիս—լիճ է կալում» և ժամանակով կամ իր առաջի «բանդը» (ամրարտակը) պատռում և գնում իր ընական ընթացքով կամ ուրիշ տեղից է ճանապարհ բայց մնում,—այնպէս էլ հոգատիրապետական հարցը միայն իր ձեզ և ուղղութիւնն է փոխում և ոչ թէ էռութիւնը: Մինչև այսօր պատճութեան մէջ այսպէս է եղել ինչ կը լինի ապագայում, մենք չը գիտենք::: Ինչպէս XIX դարը չէ ուղում այնպէս ապրել, ինչպէս օրէնսակի համար XV դարը, այնպէս էլ XX կամ XXV դարը երեխ չի ուղենայ մեր կեանքովը ապրել. բայց ինչպէս նա կապրի, մենք չը գիտենք, որովհետև XV դարի մարդկըն էլ չը գիտէին՝ մենք ինչպէս պէտք է ապրենք... Մեզ

յայտնի է միայն, որ XIX դարի վերջին քառորդում գիւղացին հողի կարօս է և այս կարօտութիւնը հարկաւոր է լիացնել:

ՎԻ. Գառնանը այժմ մեր գիւղացու այժմեան տնտեսական դրութեանը: Ինչ վերաբերում է այ հարցին, մեր կարծիքով դոնէ, բոլոր զրագծներից միայն պարոն Ա. Բահատրեանցի յօդուածը ունի մեծ նշանակութիւնը, մինչդեռ ուրիշները դատարկ փիլիսոփիայութիւններ են անում առանց գրութին տեղեակ լինելով. պատուելի պարոն Բահատրեանցը ճիշտ նկարագրել է հողատիրական յարաբերութիւնները. նա շատ լաւ է հասկացնել այժմեան գիւղացու կարիքները և անտեսական պակասութիւնները: Շատ ափսոս, որ պատուելի պարոնը մի քանի մուժ տեղերը չը բացարեց իր յօդուածում: Մենք ես անցեալ դարնանը, դառնալով մեր հայրենիքը, միջոց ունեցանք անձամբ դիտել գիւղացու տնտեսական դրութիւնը և եկանք մի և նոյն եղբակացութեանը, ինչ պ. Բահատրեանցը: Ամեն տեղ գիւղացին զգում է հողի կարօտութիւն, չը նայելով, որ մենք դու շատ դատարկ, ամայի և պաղատու հողեր ունենք:

Ա. ա) «Արի» (լեռնային) բնակիչները թէե այնքան չեն չարչարիում հողի պակասութիւնից, բայց նրանք էլ կարօտ են հողի: Հողը բաժանված է գիւղացիներին հին ժամանակից և բաժինները մնում են մի և նոյնը, չը նայելով, որ գիւղացու

բնակիչների թիւը երկու երեք անգամ աւելացել է: Կառավարութեան պաշտօնեաները դժուարութիւնով են աւելացնում գիւղացիների հողերի քանակութիւնը: Այս մասին գանդատներ մենք լսեցինք հետեւալ տեղերում, Քարվանսարա (Դիլիջանայ ձորում), Գիլիջան, Բօղի գիւղում (արա մասին պատմեց մեզ մեր բարեկամ Ա. Մատինեանցը Թիֆլիդում): Զիբուխու և Ելենովկա (Սևանայ ծովի մօտ). Արտա, Մաքրա-վանք, Դզմաշէն, Ծաղկուճ (Նոր Բայազէջի գաւառում): Ղարախաչ, Զնչուլու (Երևանայ գաւառում): Բացի հողի պակասութիւնից սարի բնակիչները զանգատվում են միներից, որոնք նրանց ցանքերին շատ վնասներ են տալիս:

բ) «Արանի» (գաշտային) գիւղացիների դրութիւնը տնտեսական կէտից աւելի անտանելի է: Արանի բնակիչները ստիպված են կուչ գալ գետերի ափերում և բռնել միայն «ջրաբրի» հողերը, այսինքն այն հողերը, որոնց գետի ջուրը համնում է: Պատճառը պարզ է. Երկրի շոքութեան պատճառով առանց ջրի ոչ մի տունկ չէ կարող բռնանել:

Յայտնի բան է՝ այսպիսի երկրում որքան մշակելու հող էլ լինի, նա կը մնայ անօդուա գիւղացու համար: Ջրի պակասութեան և միրտվերի (ջրբաժանների) գեղծումների մասին մենք գրեցինք «Մշակում», դեռ 1872 թւին: Ով որ գոնէ մի ան-

գամ ճանապարհորդել է Երևանայ նահանգի դաշտային մասում, նա չէ կարող թողնել առանց ուշադրութեան այն հանգամանքը, որ «ջրարբի» տեղերում զիւղ զիւղի վրա է. իսկ ուրիշ տեղեր շատ անգամ 20, 30 վերստի հեռաւորութեամբ երկիրը մնում է ամայի և անընակ: Օրինակ Երևանից մինչև Խւփա 30 վերստի հեռաւորութեամբ զիւղերը այնքան խիտ են, որ չէ կարելի շատ տեղ զիւղը զիւղից զանազանել. իսկ Խւփայից մինչև Գաւալու 18 վերստի հեռաւորութեամբ երկու կամ երեք զիւղ են պատահում ճանապարհում. Գաւալուից մինչև Սաղարակ 18 վերստ հեռաւորութեամբ ոչ մի զիւղ չը կայ:

Այսպիսի երեսոյթ դուք կը տեսնէք Շարուրում, Էջմիածնայ գաւառում և ամբողջ Արանում:

Բնական բան է՝ խիտ կուչ եկած զիւղերում հողի պակասութիւնը շատ զդալի է և զիւղացու տնտեսական դրութիւնը աննախանձելի. յիրաւի մեր անձամբ զիտողութիւնից յայտնի է՝ (օրինակ Զանգիբարասարում և Գեառնիբարասարում Երևանայ գաւառի) զիւղացու հոգեկան բաժինը (լուսաբանական համար այսպիսի անձանական բաժինը) այնքան փոքր է, որ մինչև անգամ ինձ առելուց չէի ուղարկում հաւատալ: Երևակայցէք, ընթերցող, ամեն հողին ստանում է մի «սօմարան» տեղ, այսինքն այնքան տեղ, որի վրա կարելի է ցանել 10 լիտր ցորեն, — դէսիստինի 1/3 մասը: Որուսաստանում ոչ մի տեղ զիւղացին այսքան

քիչ հող չունի: «Համբէն» ստանում է 3¹/3 դէսիստին հող և սրանից էլ պակաս. իսկ համբադառնալու համար զիւղացին պիտի համարի իր ընտանիքում 16 հոգի: Այս երեսոյթը նկատվում է ոչ թէ միայն մուլքադարական զիւղերում, այլ և թագաւորական: Հարկանար է ասել, որ զիւղացուն օգնելը անհրաժեշտ է: Գիւղացին թողնում է զիւղը և գնում մեծ քաղաքները օրէկան բանուրութիւնով իր հացը հայթհայթելու: Երկիրը զրկվում է զօրեղ ոյժից: Գիւղացու նահապետական մաքուր բարոյականութիւնը ապականվում է. նա վերագառնում է զիւղը բարոյապէս փչացած, բերելով իր հետ զանազան հիւանդութիւններ, որոնք թունաւորում են հայ ազգի մաքուր արիւնը և խախտում ընտանեկան հիմքը: Բացի սրանից զիւղացին պրոլետարիատ դառնալու վտանգին է ենթարկվում:

գ) Երկրի ճանապարհների պակասութեան պատճառով զիւղացու ունեցած միթերն էլ մնում է առանց զուրս տանելու: Այս հանգամանքից օգուտ են քաղում զանազան վաշխառու «փօղբաթչիներ» (ուժագույք), որոնք զիւղերում ամենաչնչին քնով առնում են ցորեն, զարի և ուրիշ բերքեր, տանում են քաղաքները և միլիոններ զիւղում ժողովողի «դառն քրտինքը» հարստահարելով: Իսկ զիւղացին ստիպված է ծախել, որովհետև փող է հարկաւոր տէրունական հարկերը վճարելու

և ուրիշ կարիքները հոգալու համար: Գիւղացինն նախադասում է իր մթերքը էժան գնով ծախել, քան թէ պարտքի տակ ընկնել և սպասել մինչև մթերքի զինը բարձրանայ: Մեր երկրում պարտք անելը գիւղացու համար շատ վտանգաւոր է, որովհետեւ 200/0 վեր առնելը սովորական կրեդիտ է համարվում: Զամազան «Հարցիները» (մանրավաճառները) և «մահտեսիները», որոնք իրենց նուիրել են «վաշխառութեանը», միշտ պատրաստ են զիւղացուն զցել իրենց «թալաքը» և քամել նրա վերջին սուսկը:

դ) Աւելացրէք որա վրա մորեխը և զիւղատնակառութեանը ուրիշ վտանգաւոր կինդանիները, որոնք շատ շուտ շուտ են այցելում երկրը, և դուք, ըսթերցագ, կարող էք մի համկացողութիւն կազմել զիւղացու այժմեան տնտեսական զրութեան մասին:

В. Ո՞ւր է մեր զիւղացու փրկութեան համապարհը և աղբիւրը: ա) Հետեւելով ժամանակի մօդախն, մեր պոռոտախօս փիլիսոփաները, միաձայն առաջարկում են կալուածատէրելիցը հոգը յևտ առնել կամ խլել, առանց տեղեկանալու գործին, առանց կատարելապէս ուսումնասիրելու երկրի տնտեսական զրութիւնը, առանց համկանալու զիւղացու կարիքները: Ի հարկէ՝ հոգը պէտք է պատկանի անի երկրագործ դաստին, առանց նրանք, յանուն զիւղացու կարիքներից հոգի վերջին կտորն էլ առնենք և մինչև անդամ նրան աքսորնեք երկրի երեսից լուսնի վրա: Վերջառէս կայսերական վերջին հրովարտակը վճռեց հարցը այս կողմից, ինչպէս լինելու է այդ վճռի հետևանքը ուսուաց տէրութեան միւս մասերում, այսպէս էլ կը լինի մեր երկրում:

րութեան կալուածատէրերի մուլքերը պարտ են զոհ զառնալ, եթէ այս ճանապարհով մեզ կը յաջողի գիւղացուն բարդաւորացնել: Սա մի այնպիսի ճշմարտութիւն է, որի վրա վիճելը աւելորդ է, առանձին ամհամատների ինտերեսները պէտք է խոնարհվեն հասարակութեան-բազմութեան օգտի առաջ:

Բայց սա հարցի մի կողմն է: Մրանով մենք կը վճռենք հարցը միայն մամնաւորապէս կամ աւելի լաւ ասած կը տանք նրան ուրիշ ուղղութիւն, առանց նպաստելու նրա հիմնական վճռելուն: Շատ կ ալ ու ած ական գիւղեր ու մ, բնակիչների հողարաժինները, ինչպէս վերեւում ասեցինք, այնքան փոքր են, զիւղական համայնքի հոգը այնքան պակաս է, որ մենք, առանց ուրիշ օգնութեան ճամապարհ որոնելու, զիւղացուն չենք կարող օգնել, թէկուզ կալուածատէրից հոգի վերջին կտորն էլ առնենք և մինչև անդամ նրան աքսորնեք երկրի երեսից լուսնի վրա: Վերջառէս կայսերական վերջին հրովարտակը վճռեց հարցը այս կողմից, ինչպէս լինելու է այդ վճռի հետևանքը ուսուաց տէրութեան միւս մասերում, այսպէս էլ կը լինի մեր երկրում:

բ) Հարկաւոր է ջրանցքներ շինել տալ: Ջուր հանել գետերիցը այն ամայի, բայց պատղառու զաշտերը, որոնք մինչեւ այսօր էլ մնում են ամսշակ և առանց բնակիչների: Այս ամայի, օձերի և կարիճների բնակարաններում հաղարաւոր զիւղացու ըն-

տանիքներ կարող են գանել իրենց օրէկան հացը
և բարօրութիւնը: Այս փորձը արդէն արած է
Երևանայ գաւառում: 1) Երևանայ գաւառի
Գողղուզ գիւղի բնակիչ Գիւղաղար աղին դեռ
յիսուն թուականներում տէրութեան թոյլտու-
թիւնով մի փոքր ջրանցք շինեց մեծ լիասինի
ստորոտում և հիմնեց Ալիղզը գիւղը. գիւղացի-
ները մշակում էին ջրած հողերը և բերքերից $\frac{1}{10}$
մասը վճարում հանգուցեալ Գիւղաղար աղին:
2) Երևանայ գաւառում գեներալ Կախանովը
վաթսուն թուականների վերջում հանեց Արաք-
սից մի մեծ ջրանցք, որ ջրում է մօտ 15 հազար
դեսիատին հող: 3) Եօթամնասուն թուականներին
խոսում էին (Եջմիածնայ գաւառի) Սարդարաբագի
մօտ մի ջրանցք հանելու մասին. չը դիտենք՝ այս
հարցը ինչպէս վերջացաւ:

գ) Հարկաւոր է էժան և ձեռնոտու կրենդի ա
բացանել գիւղացիներին, ազատել նրանց անթե,
երկոտանի և մարդածե **«մորեխներից»**—վաշխա-
ռուներից: Էժան կրեդիտը առհասարակ մեծ նը-
շանակութիւն ունի տնտեսական կեանքում, բայց
այս դիպուածում մնաք կը տանք միջոց գիւղացուն
նոր հողեր գնելու և գնած հողերը ձեռից դուրս չը
թողնելու: Դիցոք՝ թէ մի կալուածական գիւղում
գիւղացին գնում է մի կտոր հող. ժամանակով
փողի կարօտութիւնից նա կը ծախի: Աֆրիկայի
մորեխը ժամանակ առ ժամանակ է մեզ այցելում.

բայց մեր **«տնուարիկ»** (ՃՈՄՕՇԵՆԿԱՅ) երկու
ոտանի մորեխները **«չարչիների»**, **«մահտեսիների»**,
«խօջաների» և ուրիշ վաշխառուների կերպա-
րանքով միշտ ման են գալիս և պատրաստ են
գիւղացուն բարերարութիւն անել, — փող տալ
պարտք 20% , 30% տոկոսով: Այս մարդկութեան
բարերարները հողը կը պցն իրենց ձեռքը և կա-
լուածատէրերից աւելի կը ճնշեն գիւղացուն: Վե-
րևում տեսանք՝ մուլքաղարի իրաւունքը ու հ-
մանափակված է, գիւղացու և նրա յարաքե-
րութիւնները ունեն նահապետական բը-
նուաթիւն, որոշված են տեղական դիքերով և
կանօններով և ուստաց օրէնքով: Մուլքաղարը
օրէնքին հակառակ չէ կարող վարվել. գիւղացու
իրաւունքները պաշտպանելու համար կայ գիւղան
և դատաստան: Մուլքաղարը գիցուք թէ ստա-
նում է բերքի $\frac{1}{7}$ մասը, բայց հողը մնում է գիւ-
ղացու ձեռքին, ազատ կամքին և իրաւունքին:
Բայց երբ վաշխառուն տիրեց հողին, գիւղացին կը
դառնայ նրա ճորտը. նա կը տայ գիւղացուն հողը
մշակելու **«կիսով»**, **«էրկուսը մէկով»** (այսինքն բեր-
քի երկու բաժինը հաղատէրին և մի բաժինը գիւ-
ղացուն): Բացի սրանից գիւղացու կալը հողի հետ
կտրվի. իսկ այս չարիքի հետեւանքները մնաք
տեսանք վերեւում: Եւ ինչ մարդկային օրէնք կա-
րող է արդելել վաշխառուուն ճնշել գիւղացուն:
Այն օրէնսդրութիւնները, որոնցով աշխատել են

վաշխառուներին սահնձել միշտ մնացել են առանց հետևանքի: Լիկուրգի, Սոլօնի, և Հռօմայեցիների անթիւ օրէնքները (թէ հասարակաղետական կառավարութեան և թէ կայսրների ժամանակ), որոնք ուղղված էին վաշխառուների դէմ, որոնցով կամենում էին թեթևացնել աղքատ պարտաւերերի դրութիւնը, սպասած օգուստները չը բերեցին: Միջին դարերում բացի աշխարհական իշխանութիւնից (СВѢТСКАЯ ВЛАСТЬ) խառնվեցաւ այս հարցին և հոգեորականութիւնը. եկեղեցական օրէնքները արգելում էին վաշխ առնելլ: Հասան այդ օրէնքները իրենց նախատակին: Կրեդիտը ամբողջ միջին դարերի ընթացքում չէր գանվում այն դրութեան, ինչ այսօր մեզանում: Եւրօպացիների մեր ժամանակվայ օրէնսդրութիւնները, որոնք արգելում են 60/0, 80/0 աւելի վեր առնել, մի օգուտ բերեցին: իրանք օրէնստուները չը ստիպվեցան արդեօք իրենց տված օրէնքները յևտ առնել: Մեղանում Նարեկացին և բոլոր եկեղեցական օրէնքները, եթէ չենք սխալվում, արգելում են վաշխ առնելը. բայց ասացէք ինդրեմ, քիչ կան մեզանում այնպիսի ժմանտեսիներ», որոնք երեկոյեան կարդում են Նարեկը, և առաւտը փող պարտը տալիս 20 և 30 տոկոսով: Ասում ենք և կրկնում ենք, ընթերցադ, ոչ մարդկային և ոչ Աստուածային օրէնքները չունեն միջոց աղքատ դասին աղատել վաշխառուի ձեռքից:

Էժան կրեղիտ, էժան կրեղիտական հիմնարկոթիւնները միայն կարող են իրենց մրցութիւնով շատ ու քիչ աղատել գիւղացուն վաշխառուի ստրկութիւնից: Ուրեմն բաւական չէ գիւղացուն հող գնել, հարկաւոր է ևս միջոց որոնել, որ այդ հողը մնայ նրա ձեռին: Բաւական չէ մուլքագարներից հողը յևտ առնել. այլ հարկաւոր է աղատված հողերը այնպէս ապահովացնել, որ մի երկու երկու սերունդից յետոյ նոր կալուածատէրները չը բուժնեն և մահ տես սիներից կամ «չարչին երի» կերպարանքով: Սրա համար մենք կրկնում ենք — և այս մեր մաքուր, սրտից բղխած համոզմունքն է — մենք երեկք չենք կարող գիւղացու տնտեսական դրութիւնը բարւոքել և նրա հողատիրական դրութիւնը անկախ պահել և սպահովացնել, եթէ մենք միայն կալուածատէրից հող գնելով բաւականանք և չաշխատենք ուրիշ կողմերից ևս գիւղացու տնտեսական դրութիւն բարւոքել:

Դ) Հարկաւոր է գաղթեցնել հողի կարօտ գիւղիներին մեր երկրի միւս աղատ հողերը:

Մեր թագաւոր կայսրը գահը նստելու օրից ուսաց ամբողջ տէրութեան երկրագործ դասու առաւ իր օգուստափառ հովանաւորութեան տակ: Հարկաւոր է հողի կարօտ գիւղացիներից ներկայացուցիչներ ուղարկել Պետերբուրգ, Խընդիրք տալ և որին և այս երական Մեծ ռւ-

Թե անը և աղաջել, որ Նա բարեհաճի ուշադրութիւն գարձնել գիւղացու զրութեան վրա և իրաւունք տայ գաղթել նոր ազատած երկիրը:
Հայ աղջի և գիւղացիւ հաւատարմութիւնը յայտնի է: Թագաւոր-կայսրը ողորմած է և չի թողնի իր հպատակներին առանց կայսերական ողորմութեանը և հովանաւորութեանը: Գործը հեշտացնելու և աղքատ զիւղացիներին ծախսից աղատելու համար, կարելի է այդ ներկայացուցչութիւնը յանձնել Պետերբուրգում և Մոսկվայում բնակող հայերից մի քանիթին: Համարեա առնեն հողի կարօտ գաւառները ունեն ներկայացուցիչներ երկու մայրաքաղաքներում: մենք անձամբ ծանօթ մենք բոլոր այդ պարոնների հետ: Յող գործը միսեն և մենք համոզված ենք, որ ոչ ոք չի մերժի իր աղքատ հայրենակիցների համար ներկայացուցիչ գառնալ:

Ե) Հարկաւոր է գիւղատնատեսական գիւտութիւնների հետ ծանօթացներ գիւղացիներին, շատ տեղեր գիւղացին ոչինչ համկացողութիւն չունի երկիրը բարուքելու մասին, նա այնքան է ցանում, մինչև հողը բոլորովին ոյժից ընկնում է: Ծերերը պատմում են՝ թէ մի ժամանակ Երևանայ դաւառի ցորենը, գարին տալիս էին մէկին 15—20: Իսկ այժմ՝ եթէ գիւղացիները մէկին 4 կամ 5 ստանում է, նա գոհ է իր վիճակից: Երկիրը մշակվում է նահա-

պետական կարգով և գործիքներով: Գիւղացին մի աշրի հողը ցանում է, իսկ միւսին հանգստացնելում է՝ հողին ուրեմն նա օդուտ է քաղում տիրած հողի կէսից. այժմ երկու դաշտանի (Ճախովանի) երկրագործական սիստեմը վաղուց մերժված է զիսդական տնտեսութիւնից և ընդունված է բարձրագագաթ աշխատեմբ: Ամանավէս սերմափոխական ոլոճութեան ամստեմը մեր գիւղացիներին յայտնի չէ, միայն Զանդիքասար և Գետոնիքասար Երևանայ գաւառի ջալթուկից յետոյ ցանում են ուրիշ բան. երկու տարի մէկ մէկու քամակից: Պատահում է երբեմն որ մի որ և իցէ տեղի վրա մի տարի բօստան են ցանում միւս տարին բամբակ կամ ցորեն: Բայց առհասարակ երկու դաշտանի երկրագործական սիստեմը տիրապետում է ամբողջ Երևանայ նահանգում: Այս հարցը թողնում ենք զիւղատնտեսներին. նրանք ինչպէս մասնագէտներ գուցէ ուրիշ պակասութիւններ ել գտնեն մեր երկրագործական սիստեմի մէջ. բայց մննք դրում ենք այս, ինչ մեզ յայտնի է անձնական դիտողութիւնից:

Ահա մեր գիւղացւու այժմեան տնաւուական դրուժիւնը. սա շատ աննախանձելի է:

Անցեալ տարիի պարսն Քալանթարը ևս նույի-
րեց կալուածական հարցին մի աշխատանք, որով

նա ցոյց տուեց իր կատարեալ տղիստոթիւնը մեր
երկրի հողատիրապետութեան մասին: Պարոնը չէ
կարողանում հասկանալ՝ ինչպէս է ծագել Բալ-
կանեան թերակղզու վրա այն հողատիրապետա-
կան սիստեմը, որի զօրութիւնով «Տաճկական»
կալուածատէրերի իրաւունքը հողի վրա սահմա-
նափակված է: Ով որ փոքր ի շատէ ծանօթ է
ֆեօդալական հողատիրապետութեան հետ, ով որ
փոքր ի շատէ հասկացողութիւն ունի ասիական
ազգերի մուլքադարութեան վրա, — նրան այդ
երևոյթը չէ կարող զարմացնել և խորթ թուալ:
Պարոն Քալանթարը բացականչում է՝ ուր են
մեր իրաւաբանները, որ չեն ծառայում ազգին,
հետազոտելով նրա կեանքը: Բայց մէկը չը կայ,
որ հարցնի «ապա ուր են մեր զիւզամնտեմները.
միթէ ազգը նրանց օգնութեանը կարօս չէ» Նթէ
պատուելի պարոնը կեղծաւորութիւն չէ անում,
նա ինչու է «Ուուս աստանի կովերի և է շե-
րի պոչերի և պողերի չափելը չինելի իր
կեանքի և գոյութեան իգեալը:» Նախ
քան թէ քարողել ու բացականչել, լաւ չի անի
արդեօք պարոն Քալանթարը, եթէ մի քիչ նեղու-
թիւն քաշի և առաջ իր տղիստութիւնը մեր հողա-
տիրապետութեան մասին լրացնի:

Մենք հեռի ենք մեր իրաւաբաններին պաշտ-
պանելու մոքից. դեռ անցեալ տարի պա-
րոն Քալանթարից շատ առաջ մեր վերջին աշ-

խատանքում «Մեր ժողովրդական Արգերի Էտ-
նոլոգիական նշանակութիւնը» վերնազրով, մատ-
նացոյց արեցինք մեր իրաւաբանների պախարա-
կելի անտարբերութեան վրա զէպի մեր իրաւա-
բանական կեանքը: Մեզ վրդովեցնում է մեր երի-
տասարդութեան փարիսեցիութիւնը. մեզանում
ամենքը ուզում են իրենց մեղքը ուրիշ շինքը
գցել. բժիշկը, օրինակի համար, մեղազրում է
լսուադէտին, լեզուազէտը մաթէմատիկոսին, սա
իրան հերթում զիւզամնտեսին և զիւզամնտեսը
իրաւաբանի հետ միւս մամնազէտներին: Սա կա-
տարեալ կատակերգութիւն է.... Մեր երկրի բնա-
կիչներից շատերը թշուառ են. նրանք կարօտ են
ամեն տեսակ զիտութեան և ուրեմն ինչպէս իրա-
ւաբանի, նոյնպէս էլ ուրիշ մամնազէտների: Փառք
Աստուծու «Հունձը առատ է, բայց մշակները սա-
կաւաթիւ»:


VIII. Ընթերցով ունի իրաւունք հարցնելու
թէ ինչու մենք ոչինչ չասեցինք մեր անցեալ
պատմական հաղատիրութեան մասին:

Մեր անցեալ ինչպէս և ներկայ իրաւաբանա-
կան կեանքը հետազոտված չէ: Մեր սակաւաթիւ
զիտնականները փոխանակ նոր հետազոտութիւն-
ներ անել, մկում են սօֆեստական մռայլը աւելի
տարածել մեր առանց էլ անմշակ պատմութեան
վրա, հերքելով մեր ամենաերեսելի պատմագիրների
նշանակութիւնը և հեղինակութիւնը: Այսպիսով

նրանք տապիս են հաստատ հիմք մեր ռամիկ ժողովի անտեղի նախապաշտունքին՝ իբր թէ շատ կարդացողը վերջապէս կը գժվի։ Եթէ մեր դիտնականները այսպէս սխալ են վերաբերվում մեր պատմութեանը, ինչ զարմանալի բան է, որ մեզ պէս հասարակ մահկանացուները շատ չեն կարող անել։

Ֆեօդալական կեանքը Հին Հայաստանին խորթ չէ. մեր ժագաւորների և նախարարների յարարութիւնները շատ նման էին ֆեօդալական գերիշշանի և նրա վասսալների յարաբերութիւններին։ Մեր իշխաններից շատերը եւրօպական վասսալների պէս ժամանակով զօրացան և ձեռք բերեցին իրենց նախարարական երկրի մէջ անկախ գերիշշանական իրաւոնքներ։ Իսկ ինչ վերաբերում է նրանց ներքին յարաբերութիւններին, — իրաւոնքներին և պարտաւորութիւններին դէպի ազգը, — այս հարցը մնում է անմշակ։ Գուցէ ժամանակով մենք վերապառնանք դէպի այս հարցը և հետազոտենք հին Հայաստանի ֆեօդալական երեսիթները, բայց այժմ հարկաւոր ենք համարում այս հարցը լուրջեամբ անցկացնել։

Սօլօմօն Աղիազարեանց



ՀՀ Ազգային գրադարան



NL0243357

